

Բայց նկատմամբ բոլոր այն միւս խօսքերուն, որոնք կը գտնուին պապիրոսներու կամ ծիսական հին մատենաներու մէջ, ու մանաւանդ «անվաւերական» զրքերու մէջ, հարկ է շատ զգուշութեամբ առաջանալ:

Ստուգելու համար թէ իսկապէս Քրիստոսի կողմէ ըսուած են այդպիսի խօսքեր, գիտնականները երեք դատանի՜ կը թուեն. 1) որ այդ անգիր վկայութիւնը հաստատուի իրարմէ անկախ դանադան աղբիւրներէ: 2) որ իւրաքանչիւր անկախ աւանդութիւն, արժանահաւատ աղբիւրէ մը ըլլայ: 3) որ այդ անգիր վկայութեան մէջ ներկայացուած վարդապետութիւնը՝ համեմատելի ընթանայ չորս Աւետարաններուն մէջ ներկայացուած վարդապետութեան:

Հինգերորդ Աւետարան

Այս սկզբունքներով հարկ է քննել նորագիւտ «Թովմայի Աւետարան» ալ: Տեսնենք համառոտակի. անվաւերական մատենան մըն է, զպտերէն, որ հակառակ իր խորագրին՝ Աւետարաններու պատմական նկարագրին հետ բնաւ աղերս չունի. հաւաքածոյ մըն է Քրիստոսի 114 պատմամաներու կամ առակներու, որոնց չէ կարելի «Հինգերորդ Աւետարան» տիտղոսը տալ, սեղմ իմաստով:

Այդ պատմամաներէն ոչ մէկը ներշնչեալ է, հետեւաբար չի կրնար պարտադրել որ

հաւատք ընծայենք: Կարելի է ըսել որ այդ պատմամաներէն մաս մը՝ գնոստիկեան աղանդին ազդեցութիւնը կը կրէ. ուրիշ մաս մը՝ արդէն Աւետարաններէն ծանօթ է. կան ալ նորեր: Ահա ասոնց մասին հարց կը տրուի, զոր պէտք է լուծեն մասնագէտները. արդեօք հաւանակա՞ն է որ այս 114 պատմամաներէն ոմանք իսկապէս Քրիստոսէ արտասանուած խօսքեր ըլլան, որոնք ցարդ կ'որսուած էին:

Այս հարցումին կը ճշնի պատասխանել Gilles Quispel, շատ նուրբ, զգուշաւոր եւ լուրջ պրպտումով, ինչպէս նիւթն ինքնին կը պահանջէ: Իր բոլոր կարծիքները թէեւ ամէնքէն ընդունելի պիտի չըլլան, բայց իր մեկնութիւնները՝ շատ հետաքրքրական պրպտումի մը սկիզբն են: Այս տեսակետով «Թովմայի Աւետարան» կոչուած այս նորագիւտ հաւաքածոն մեծարժէք գանձ մըն է. մասնաւորապէս անով՝ որ կարելի պիտի ըլլայ աւելի եւս խոր կերպով ճանշնալ Քրիստոսի խօսքին արձագանքը, քրիստոնեայ առաջին սերունդին մէջ: Բացի ասկէ, այս պապիրոսները մեծ նըպաստ մը պիտի բերեն՝ զպտի բեղուն ուսումնասիրութեան եւ Նոր Կտակարանի զպտերէն թարգմանութեան, ինչպէս նաեւ գնոստիկեան աղանդի պատմութեան եւ ծաղկերուն, որ այնքան խորհրդաւոր կը մնայ:

Հայացուց

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

(Վ Ե Ր Ջ)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԼԱՅՈՑ ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑԻՆ

(Շար. տես «Բազմավէպ» 1959, թ. 11-12, էջ 249)

6. — Խաղաղական ժամ. — ա. Ծանօթ էր Սիւնեցիին, բայց ոչ Օձնեցիին: Կը սկսէր երկտուն սաղմոսով, Տէր Աստուած փրկութեան — Մտցեն աղօթք իմ (2է, 2, 3) փառատութեամբ հանդերձ, որուն ժամանակի մասին խօսեցանք, եւ որ կայ Մաքենեաց Խրատներուն, 1284ի ժամադրքին եւ ուրիշներու մէջ. իսկ յունական ունի իրենը (136): Ստեփանոս իր աղքատ նկարագրութիւնը կը սկսի յիշատակութեամբ ուրիշ սաղմոսներու. «այլ եւ այլ ասին ի տեղիս (որ է այս տեղ) սաղմոսք». եւ կը կոչէ անոնցմէ մէկուն մէկ տունն ալ. «ննջեցուք խաղաղութեամբ եւ զարթիցուք» (Բ, 140), որ յատուկ է Ի կարգալին (Դ.): Յայտնի է ուրեմն՝ որ ասիկա մէկն էր նոյն սաղմոսներուն, զորս վըթուէ Մովսէս Եղեկացին 1255ին՝ ըսելով. Սկսանիս սաղմոսք չորք ըստ քառանիւթեայ բնութեանս. իսկ ոմանք հիմկ սաղմոս ասեն ըստ հինկ զգալութեանցս մաքրութեան». եւ ինք յառաջ կը բերէ քանի մը տուն Դ. 2, ԺԲ, ԿԹ սաղմոսներէն (367). իսկ հինգերորդը պէտք է ըլլայ ԺԶ, որ կայ 1284ի ժամադրքի ցուցակին մէջ: Եւ այդ հինգն ալ կը բղխին խաղաղական պաշտամունքին հետ՝ յունական աղօթամատոյցէն, որ նոյն ժամուն մէջ ունի Դ. 2, ԺԲ յաջորդաբար (136), ԿԹ՝ անոնցմէ հետի (154), եւ ԺԶ՝ երրորդ ժամուն մէջ (86): Եւ անկասկած այս չորքն էն հինգն ալ՝ առաջինն նման:

Բ. Այս ժամն ալ զուրկ է սաղմոսակա՝ նոնէ՝ Երեկային պէս եւ միեւնոյն պատճառով, ինչպէս կը պակսի տակաւին

Մաքենեաց Խրատներուն մէջ եւս (Յաւ. Ա): Ընդհակառակն՝ Սիւնեցին ունի հոս Շնորհեա մեզ տէր երզը, որուն աղբիւր դարձեալ յունական աղօթամատոյցն է, ուր կը գտնուի այն՝ երկրորդ մատովը միայն, որ կը սկսի «Լուարուք մինչեւ ի ծագս երկրի», եւ կ'երգուի դաս առ դաս (142): Ստեփանոս վոչումներ կ'ընէ բուն իսկ այս մասէն, եւ ոչ ըստ տառին, այսպէս. «ընդ մեզ տէր Աստուած մեր. — ի ծագաց մինչեւ ի ծագս աշխարհի, զի Աստուած մեր է. — հօրացեալքդ ի պարտութիւն մատենաջիւղ, զի ընդ մեզ ի պարտութիւն մատենաջիւղ, զի ընդ մեզ է Քրիստոս» (Բ, 140-141): Այս երզը ա՛յլ զատ քաղուած մըն է Եսայի մարգարէի Ը, 9, 10, 12, 13, 17, 18, Թ, 2, 6 համարներէն, տուններու բաժնուած՝ որոնք կ'աւարտին «2ի Աստուած ընդ մեզ է» յանկերգով: Այսպէս է յունարէնի եւ հայերէնի մէջ, բոլորովին նման իրարու: Սիւնեցիի կոչումը այս մասէն միայն եւ յիշատակութեամբ Եսայիի, խորհիլ կուտայ՝ որ այս չորանիս առաջին մասը տակաւին կը պակսէր հայերէնին մէջ, եւ յետոյ ստեղծուեր է: Սիւնեցիի առաջնորդն այս երզով կը կնքէ Խաղաղականը, որմէ պիտի հետեւէր՝ թէ ուրիշ մասեր դեռ չկային իր մէջ. թէպէտեւ փոյթ չունի ան պաշտամունքի բոլոր մասերն յիշելու իր մեկնութեան մէջ, եւ այդպէսով ենթադրութիւններու կրնայ առաջնորդել, որոնց մէջ սակայն մտնել չենք ուղեր:

Գ. Բայց կայ կէտ մը՝ զոր չենք վարող անտեսել: Զգացուցինք կցորդաւոր քարոյի եւ երկմասն աղօթքի մը պէտքը նաեւ

Արեւադարձի ու խաղաղականի մէջ, զոր կը պահանջէր պաշտամունքի հաւասարութեան դրութիւնը: Կրնանք ուրեմն հաւանիլ՝ թէ այս ժամուս Գոհացարուք քարոյն ու Տէր բարեբար աղօթքը, որ հին էին եւ մեկնեց խորով (382, 384), կային այս պաշտամունքի դոյութեան հետ իսկ, եւ զոր Սիւնեցիի ուշադրութիւնը չէ կարող հերքել: Երկուքն ալ մեկնիչին քով նման են այժմեան ձեւին՝ դոյն տարբերութեամբ: Ասոնցմէ աւելի քարոյ կամ աղօթք չէ տեսեր Անձեւացին, եւ եղածներն յետամուտ են ու մեկնուած Եղնկացիէն, առանց անուան:

Դ. Տեսանք՝ որ յոյն ժամադրքին այն մասերն՝ որ կան նաեւ հայկականին մէջ, ընդհանրապէս քաղուած են այս շրջանիս: Արդ նոյն աղբիւրէն է Երանեալ եմ ամբիժ մեծ սաղմոսն ալ (ՃԺԸ), որ անոր Միջադիւշերի երկրորդ փոխն է (7): Եւ շատ պատշաճ է՝ թէ ուրիշներու հետ հայացած ըլլայ, քան ուրիշ ժամանակ եւ ուրիշ ձեւերով. որովհետեւ նոյն աղբիւրէն այդպիսի երկրորդ փոխառութեան մը դիմելու բաւական նիւթ եւ պատահութիւն չէր մնացած՝ յետ առաջին ձեռնարկութեան, եւ չունինք ուրիշ յետամուտ մասեր: Որով կրնանք հաւանիլ՝ թէ այս շրջանէն է Երանեալն եւս, որ կը յիշուի ԺԲ. դարուն՝ Մաքենեաց Խրատներուն մէջ՝ յետ վերջին (Շնորհատու) աղօթքին (Յաւ. Ա.): Գ. Տաթեւացին այս սաղմոսը «ապաշխարութեան» յատուկ վը դնէ (Հրց. 630): Այս շրջանիս տեսանք այդպիսի դանդաղութիւն նաեւ ցերեկի քարոյներու եւ աղօթքներու մէջ: Սակայն փոքր չենք եւ այս սաղմոսին վերապահութեան սկիզբէն, նկատելով մանաւանդ՝ որ յունականին մէջ ամէնօրեայ է, եւ մեր խաղաղականն ալ կը տանէր դայն՝ նախ քան ծանրաբեռնուիլը սաղմոսականոնով՝ զոր պիտի ընդունի յետոյ, եւ որ կրնայ պատճառ եղած ըլլալ այդ երկին աղուհացի յատկացման:

7) Շարականներ. — ա. Հասարակաց աղօթքի մաս կը կազմէին ասոնք, որ կը

խառնուէին մարդարէական օրհնութիւններու եւ միւս հանապաղօրեայ փոխերուն հետ, ինչպէս պիտի տեսնենք:

Ե՞րբ սկսան ասոնք ստեղծուիլ: Հաստատեցինք իրենց բացակայութիւնը մեր ժամերգութեանն՝ Ե. դարուն մէջ. ինչպէս միւս արեւելեան եկեղեցիներն ալ դեռ չունէին հաստատուն եւ հասարակաց ընդունելի երգերու բաղմութիւն մը: Ասոնք սկսան Ը. դարու ընթացքին, բարդուելով մարդարէական օրհնութիւններուն վրայ. եւ իրենց առաջին հեղինակ վը համարուի Անդրէաս Կրետացի (մ. 725ին) — ինչպէս թուեցաւ եւ Բէռնարի (Ա., 181) — որուն շարադրածները, յատուկ դանդաղ ասոններու եւ ըստ ութ ձայներու, կը նմանին ու ձեւուած են մեծագոյն մասամբ օրհնութեանց իմաստներուն վրայ: Իւրաքանչիւր ասոնին նուիրուած է կանոն մը. սեփական մէկ կամ միւս ժամու պաշտամունքին: Իսկ կանոնը սովորաբար կազմուած է ինը տուներէ, ուստի ինը օրհնութեանց վրայ, յիշեցնելով Սինայի համանմանութիւնը, եւ երբեմն ալ պակաս. իսկ երկուքը, որոնցմէ մէկը Սիմէոն Ծերունիին եւ Աննա մարդարէին, եւ միւսն ՅՅ. Մկրտչին, բաժնուած են իննական երգերու վրայ, որ է նոյնպէս օրհնութեանց թուով, իւրաքանչիւրը կազմուած երեք, երկու կամ մէկ տունով: Անդրէաս իրեն հետեւող ունեցաւ Կողմաս Մայումացի (մ. 745ին) եւ Յոհան Դամասկացի (մ. 760ին) երգահանները, որ պահելով ինը թիւը, զրեցին աւելի լայն ու վսեմ ոճով: Կողմայի կանոններն յօրինուած են մաս մը մէկ եւ մաս մ'ալ երկու, երեք կամ չորս երգերէ, որով աւելի ճոխ թիւով²:

Բ. Գալով մեր Շարականներուն, եթէ հաւատանք շարականագիրներու այլ եւ այլ ցուցակներուն՝ որ կը սկսին երեւիլ ԺԳ. դարէն, հնագոյն հեղինակները կ'ըլլան Սահակ, Մեսրոպ եւ ՅՅ. Մանդակունի՝ Ե. դարէն. Անանիա Շիրակացի եւ

1. Հմմտ. Լ. Պրոխի Ի Կարբու, Ա., 2034-41:
2. Անդ. Գ. 2993-97. Բէռնար, Ա., 433:

Մովսէս Քերթոյ՝ Է. դարէն, եւ ուրիշներ, զրոյներ որոշ շարականներու, ինչպէս կը կարգանք 1284ի ժամադրքի ցուցակին, Գ. Տաթեւացիի յօրինածին (Հրց. 637), Ս. Ղազարու թ. 848 զրչադրին մէջ (54) եւ այլն: Ասոնցմէ առաջ Կիրակոս Գանձակեցին՝ իրր 1265ին՝ թարգմանիչներու դասուն վերադրեց անթիւ « Երգս շարականաց... Ծննդեանն Քրիստոսի եւ Քառասնօրեայ դալատեան ի տաճարն, Մկրտտութեանն եւ Եկաւորութեան ի Բեթանիա եւ յԵրուսաղէմ, Մեծի շարաթու չարչարանացն, Յարութեանն եւ Համբարձմանն, եւ Հոգւոյ Գալատեան, Սաչի եւ Եկեղեցւոյ եւ տէրունականաց եւ ամենայն Նշննեցելոց» (17): Այդ հաշիւով՝ զրեթէ բոլոր շարականները թարգմանիչներուն զործը կ'ըլլան:

Վէպ մ'ալ ստեղծուած է Ներսէս Շինողի մասին (641-661), զոր նոյն պատմիչը առաջ կը բերէ, իրեւ թէ՛ օր մը, Վարդափառի ասոնին, կաթողիկոսը Բագուան էր. եւ այդ շրջանին այնչափ «բաղմացեալ էր երգ շարականաց յեկեղեցիս Հայոց, մինչեւ ոչ զիտեւ միոյ դաւառի զերգս միւսոյն. եւ ասաց մի դասն շարական ի Վարդափառի Հարցն, եւ միւս դասն ոչ կարաց փոխել զնա. եւ փոխեցին բաղում շարական, եւ դայն եւս ոչ զիտէին»: Հայրապետը այդ խառնակութեան վերջ դրաւ, կ'ըսէ պատմիչը, ընտրելով «ղպիտանին եւ զօգտակարն» — ձոն Բարսղի ձեռքով՝ ըստ Վարդանի (69), — եւ պարտադրելով դայն բոլոր Հայաստանեայց (34):

Բայց այդ ամէնն առասպել էր՝ զոր կերտեց միջին դարն իրեն յատուկ դիւրութեամբ, իսկ ճշմարտութիւնը տարբեր: Կը կրկնեմ՝ թէ ո'չ շարականները, ո'չ ալ իրենց անունը դոյութիւն չունէին Ե. դարուն: Միայն Հովիթիմեանց Անձիմեմ ստուգիւ Կոմիտասինն է, ինչպէս կ'ըսէ Կիրակոս (30), — եւ հնարաւոր է, սակայն ստիկա շարականներու հանդամանքէն ու չափէն դուրս՝ լոկ ներբողեան մ'է, տաղապիտալ եւ այբուբենի թիւով, եւ շատ ուշ մտած ըլլալու է շարականոցին մէջ, ուր

կը տեսնենք դայն՝ Ս. Ղազարու հնագոյն օրինակէն սկսեալ, որ է 1286ին (թ. 353), Հարցով եւ միւս մասերով հանդերձ: Արդէն եթէ դոյութիւն ունենային այդ ժամանակ շարականներու պատկերներ — Օրհն. Հրց. Մեծ. Ող. Տր. Մկ. Հմբ. — եւ Կոմիտաս իրեւ օրհնութիւն գրած ըլլար իր երգը, պահելու էր նախ օրհնութեանց չափը, եւ ապա շարադրելու ամբողջ պատկերը — ինչպէս վրիպակաւ կարծեց Գ. Տաթեւացին (Հրց. 637) — ուր միւս մասերն արձակ եւ հեռու են Կոմիտաս կաթողիկոսի ոճէն եւ արուեստէն: Որով անծանօթ էր իրեն շարականի օրուան պատկերի զաղափարը: Իրմէ վերջն է Օճնեցին, որ պաշտամունքի բաւական մանր նկարագրութեան մէջ (18-20, 27-31), ուր կը յիշուին սուղ երգերն անպամ, անտեղեակ է շարականներուն, թող թէ հեղինակ Դաւթի ու Յակոբայ կանոնին, ինչպէս կարծեց Գանձակեցին (39) ու կրկնեց Տաթեւացին, կամ թէ բովանդակ « Աւագ ասոններուն » ըստ թ. 848 զրչադրին՝ զոր յիշեցինք:

Գ. Հ. Գ. Աւետիքեան, Հ. Մ. Չամչեան եւ ուրիշ հիւնք կրկնեցին ինչ որ տեսան միջնադարեան հեղինակներու քով: Իսկ արդի բանասէրներէն Սահակ Վ. Ամատունի, որ ամէնէն աւելի զբաղեցաւ շարականներու խնդրով, նոյն կանխակալ համոզումէն պաշարուած, Եղիշէի «Երգը» շարական հասկցաւ, որովհետեւ ԺԲ-ԺԳ դարերու երկու մասեանագիրներ այդ բաները կիրարկած են հոմանշարար: Դիւրին, բայց վտանգաւոր եղանակ՝ մեկնելու նախնեաց բառերը: Եւ Սահակն ու Մեսրոպը համարեցաւ առաջին շարականագիրները³: Եղան աւանդութեան հետեւող կամ մթութեան մէջ խարխափող ուրիշ աղագային գրիչներ եւս, որոնցմով չենք ուզեր զբաղիլ ու զբաղեցնել մեր ընթերցողները: Իսկ Լեւոնյանցիներէն Հ. Լիլերի բաւական մանրամասնօրէն պարապեցաւ մեր շարականներու հարցով, կոչելով հե-

3. Արարատ հանդ. 1894, 177-79:

դինականներու միջնադարեան ցուցակն ալ, զոր հաստատուած նկատեց «հաւատարիմ աւանդութեան մը» վրայ, եւ նոյն երգերու հաւաքածոյին մէջ նշմարեց «հնութեան եւ վաւերականութեան նշաններ», բայց առանց ցուցնելու⁴։ Հմուտ եւ յարգելի բանասէրը, անտեղեակ մեր լեզուին, տեղեկութիւններ հաւաքած է հայագէտ եւրոպացիներէ, որոնցմէ յաճախ լաւագոյն կերպով մեր աչքերը կը տեսնեն ու կը դատեն հայ անցեալին տարրերը, երբ կաշկանդուած չեն պատրիզ աւանդութիւններէ։ Այսպէս, ուրիշներէ աւելի սրտես հանդիսացաւ Եղիշէ Պատրիարք Դուրեան, որ կասկածեցաւ շարականներու գոյութեան Ե. դարուն, յիշելով Լաւրդիկեայ ժողովի սահմանն ալ։ «Կեղակարծ» գրաւ. Բագմալէպի դէպքը. եւ «քիչ շատ ծանօթ վաւերականութիւն մը» տուաւ Կոմիտասին, Գ. Սահակի ու Ստ. Սիւնեցիի ընծայուածներուն⁵։ Պէտք էր խստանալ նաեւ Սահակի դէմ, որ կանուխ էր ժամանակով (677-703) քան շարականներու յայտնութիւնը։

Դ. Մեր համոզումով՝ շարականներու ծագումը պէտք է որոնել Բ. դարուն, եւ յետ իմաստասէրին, Յունաց երաժշտական գործունէութեան հետ եւ օրինակով։ Սիւնեցիին, - որ աղօթքի իր մեկնութեան ժամանակ դեռ անտեղեակ էր շարականներուն, եւ գիտէր ու կը յիշէ «Շնորհեա մեզ տէր» երգը միայն - ուսած Յոյներու քով եւ դիտող անոնց զարգացման - հրապուրուեցաւ Անդրէաս Կրետացիին գործէն, որ իրմէ տասը տարի առաջ վախճանեցաւ, եւ մեր առաջին շարականագիրն հանդիսացաւ։ «Արար, կ'ըսէ Կիրակոս, եւ երգս հոգեւորս քաղցր եղանակաւ շարականս» (404)։ Եւ Ստ. Օրբելեան աւելի մանրամասնօրէն՝ թէ «բաժանեաց զութ ձայնս, եւ կարգեաց շարեաց զՅարութեան օրհնութիւնս», իւրաքանչիւր տասնական շարականով, այսինքն մեր մարգարէական օրհնութեանց թիւով, որ մէկով աւելի էր քան յունականը։ Որով մեր երգչին հետեւեցաւ Յոյնին դրութեան. բայց հետանա-

լով անկէ եւս՝ շարականներու տուններու չափին մէջ, եւ սովորաբար երեք տուն միայն տալով իւրաքանչիւր շարականի։ Գանձակեցին օրհնութեանց «երրորդ կողմն» կ'առնէ Ստեփանոսէն եւ Ն. Շնորհալին կու տայ (68), եւ զոր կը կրկնէ մեր վերոյիշեալ 1284ի ցուցակն ալ. «զաւրհնութիւններն զէ ձայնս Ստ. Սիւն., զվառ ձայնս տէր Ներսէս Կլայեցիին». եւ Տաթեւացիին կը հետեւի ասոնց (Հրց. 637)։ Սակայն Հ. Աւետիքեան այդ ձայնին մէկ բացատրութիւնը՝ «որ յաթոտ քերովքէականս բաղմէիր ըն Հօր» կը նշմարէ Գր. Մազիստրոսի քով, «բաղմեցաւ» ձեւով⁶, որով շարականը կանուխ կ'ըլլայ քան Շնորհալին։ Եւ արդէն մէկ ձայնի պակասը Սիւնեցիին կողմէ՝ անմեկնելի է եւ դժուարին է հաւատալ։

Աւագ օրհնութիւնները, ինչպէս կը կոչենք այժմ, չափով մը յարասութիւն են մարգարէական օրհնութեանց՝ նման յունականներուն, բայց աւելի ազատ քան անոնք։ Տասնական շարականներ՝ իւրաքանչիւր ձայնէ, կապուած են տասը մարգարէականներուն հետ, որոնք ամբողջութեամբ կ'երգուէին ամէն Կիրակի, եւ իւրաքանչիւրին հետ կը խառնուէր մէկ մէկ շարական՝ նոյն ձայնէն։ Ասիկա տեղի կ'ունենար գիշերային հսկման մէջ, որ յատուկ էր այս շրջանիս տէրունական օրուան, ինչպէս պիտի տեսնենք։ Բայց որովհետեւ ընդհանուր եւ մնայուն սովորով մը չէր այդ հսկումը, ինչպէս պիտի ցուցնենք, անոնք որ զայն չէին կատարեր, եւ միջնագիշերէն կը սկսէին Կիրակիի պաշտօնը, կը համարիմ⁷ թէ յետ Սիւնեցիին սկսան երկու սովորական վանոններու եւ նոյնքան օրհնութեանց կցել երկու շարական Ստեփանոսի գրածներէն, ինչպէս տակաւին կը գտնենք յետոյ, եւ որուն վրայ կը չափուին սովորաբար ապագային շարադրուած օրհնութիւններն եւս։ Եւ թէ

4. Կարբուլ, 2, 2899-2901։

5. Սիւն հանդ. 1932, 341-42։

6. Բացատր. շարականաց, 672։

ինչպէս մարգարէականներն ու շարականները կը կցորդուէին, պիտի տեսնենք ԺԳ. դարերու նկարագրութեան մէջ։

Ե. Կիրակոս կը յարէ՝ թէ Սիւնեաց եւ պիսկոպոսն յօրինեց նաեւ «կցորդս եւ այլ երգս» (40), զոր Օրբելեանը կ'ընդլայնէ այսպէս. «Երգեաց կցորդս քաղցրահամս, յարմարեաց զստողութիւն Յիւնաց եօթն եւ զանակօք յոյժ խորհրդաւոր, եւ զպահօցն (ստողութիւն) որ յաղուհացան երգի» (10)։ Կցորդ բառն արդէն ծանօթ մեզի իր պէսպէս իմաստներով, այս շրջանիս կը գործածուի լոկ երգի նշանակութեամբ, եւ Օձնեցիին ատով (կցորդ) կը կոչէ Առաւօտեան երգերն յետ Փառքի բարձունս-ի (28), Սուրբ Աստուած-ին յաւելուածը՝ Փառաւորեալ (29), եւ Երեկոյի Օրհնեալ տէր-ը (22)։ Համառօտ երգեր էին այդ պատմիչներուն յիշածներն ալ, սեփական տէրունական եւ մեծ սուրբերու տօներուն, որոնց կը հանդիպինք աւելի ուշ, ամփոփուած ուրոյն մատենաներու մէջ, որոնց մասին պիտի խօսինք առանձին։ Եւ յայտնի չէ՝ թէ որչափ եւ որոնք էին անոնց մէջ Ստեփանոսի շարադրածները, եթէ ստոյգ է պատմիչներուն ըսածը։ Յեռն ալ՝ թէ պաշտամունքի ո'ր մասերուն մէջ կ'երգուէին. մինչդեռ յաջորդ աղբիւրներէն դիտենք անոնց տեղերը. այսպէս Հալէպի 1338ի Մանրուսումն ունի «կցորդ» փոխման Աստուածածնի, կապուած կանոնադրութիւններու, Հարցին, Մեծացուցէին, Ողորմեային ու Տէր յերկնիցին հետ⁸։ «Կցորդը» կը յիշուի նաեւ մեր հնագոյն Մաշտոցէն՝ ԺԱ. դարու, Հայր առնելոյ եւ քահանայաթաղի կանոններուն մէջ։

Գալով Ստողագեաց, յունարէն στυχο-λουργία բառն է՝ որ կը նշանակէ երգել սաղմոսի տուններ։ Մանրութեանքներու մէջ⁹, ինչպէս են Թաւրեթի 1300ի օրինակը, Հալէպի 1338ին⁹ եւ այլն, կան արդարեւ «ստողութիւն աղուհացից», նշանակուած սաղմոսներու առաջին տուններով։ Մեր 1287ի Տօնացոյցը կ'իմացնէ անոնց տեղն ալ, ըսելով՝ թէ խաղաղական ընթերցումը կարգաւ «եւ ասա զիւր ստողութիւն»։

Ս. Ղազարու 1313ի Մանրուսումն եւ 1338ինը ունին նաեւ «ստողութիւն մեծի ուրբաթին», որ են ցերեկի ընթերցումներու նախադաս սաղմոսները։ Կը գտնենք դարձեալ «ստողութիւն յիւնաց ճաշոց» կամ պատարագի, ընթերցումին սկիզբը, նոյն 1338ի օրինակին մէջ։ Այս եղանակը կար ու ծանօթ էր Ստեփանոսի վարժապետին՝ Մովսէս քերթողի եւս, որ կը գրէ. «սովաւ (չորրորդ ձայնիւ) շարադասեցան ստողութիւնս սաղմոսք ի սուրբ պատեքին ի յարութեանն Քրիստոսի» (8)։ Կը հետեւի՝ որ աշակերտն աւելի ճոխացուց ու զանազանեց նոյն սաղմոսներու եղանակները, որ կային։ Եթէ պատմական է այս տեղեկութիւնը, միանգամայն պիտի հետեւի՝ որ խաղաղական ընթերցումն ալ քառասնորդաց մէջ, որոնց հետ կապուած են Սիւնեցիին ստողութիւնները, կ'ելլեն մինչեւ այս շրջանը։ Բայց ընթերցումը մասին պիտի խօսինք յետոյ։

Գ. Որովհետեւ եղանակներու հետ ենք, հետաքրքրական է Մովսէս Քերթողի տրուած տեղեկութիւնը քարոզներու մասին։ Երրորդ ձայնի մեկնութեան մէջ կ'ըսէ՝ թէ «սովաւ յօրինեցան քարոզութիւնք տունընջեան եւ զիշերոյց» (8), ուստի կը կիրարկուէին եղանակով։ Չենք գիտեր՝ թէ ե'րբ սկսած է այդ սովորութիւնը, որ կը տեսնուի կը յիշուի նաեւ խոսքովէ, բայց զանազանութեամբ մը։ խօսելով նա Գիշերային Զարթուցեալս քարոզին Եօթը կցորդներու նկատմամբ, կ'ըսէ՝ թէ անոնք վերջին «գերիս տունսն յամենայն ձայնիւ բարձուն զնեմք, զառաւել պիտանութիւն սոցա յայտ առնելով» (20)։ Ուրեմն քարոզներու մէկ մասը թիւ կ'ըսուէր. իսկ անոնք՝ որ ունէին այդ երեք տունները, «ձայնիւ» կամ եղանակով, ըստ որում աւելի կարեւոր էին։

Ասոնք էին հարկաւ Գիշերայինի Զարթուցեալս եւ վերջին չորսերը, Ա-

7. Սիւրմէեան Ցուցակ, 22-23։

8. Հանդ. Ամս. 1905, 312։

9. Սիւրմ. Ցուց. 19։

առաջին փառաւորեցութիւնը, Արեւադալի Յարեւելից, ճաշու երեք մեծերը, Երեկոյի Աղաչեցութիւնը, եւ խաղաղական Միաբանութեամբ, որոնց առաջինին կցորդները միայն յիշած ու մեկնած է Անձեւացին, եւ միւսները լռած՝ չկրկնելու համար, ինչպէս ըսինք. բայց անպակաս վերեւին հընադոյն ժամադրքերու մէջ:

Կարժէ կազմել այս շրջանիս պատկերն ալ, նման առաջինին, որոնք մեր աղօթամատոյցին կազմութեան երկու հիմնական ժամանակամիջոցները կը ներկայացնեն:

Պ Ա Տ Կ Ե Ր

Զ - Ը ԴԱՐԵՐՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ

ԳԻՇԵՐԱՅԻՆ

Սաղմ. - Տէր, եթէ զըթունս...
Սաղմ. - Տէր, զի՞ բազում
Քարոզ. - Զարթուցեալքս
Աղօթ. - Զքէն դոհանամք
Կան. - Երանեալ
Օրհն. - Օրհնեցուք զՏէր եւ Շարական
Քարոզ. - Վասն ի վերուստ
Աղօթ. - Տէր երկին
Կան. - Երկինք պատմեն
Օրհն. - Նայեցարուք եւ Շարական
Քարոզ. - Վասն ի գիշերի
Աղօթ. - Ի գիշերի
Ընթերցում
Օրհնութիւն ժողովրդեան:

Այս պաշտամունքը յատուկ էր կիրակի եւ հանդիսական օրերու:

ԱՌԱՒՕՏԵԱՆ

Սաղմ. - Լցաք առաւօտու
Կան. - Մի՛ նախանձիր
Օրհն. - Զի հուր - Ծաներուք
Քարոզ. - Վասն ուղղելոյ
Աղօթ. - Տէր տուրնջեան
Կան. - Ողորմեա
Օրհն. - Հաստատեցաւ
Քարոզ. - Վասն գտանելոյ
Աղօթ. - Գոհանամք զքէն
Օրհն. - Օրհնեալ ես, Տէր

Քարոզ. - Եկեալքս
Մաղթ. - Աստուած, քաւեա
Մեծացուցէ (ի Կիւրակէի)
Երգ. - Արի՛, Տէր
Աւետարան Իւղարերից
Երգ. - Ի գիշերի
Քարոզ. - Զուարճացեալքս (Կիւր.)
Սաղմ. - Ողորմեա՛ ինձ
Քարոզ. - Երկրպագեմք
Մաղթ. - Ողորմած, մարդասէր
Օրհնեցէ՛ք զՏէր յերկնից
Փառք ի բարձունս
Աղօթ. - Փառք, պատիւ
Երգ առաւօտու
Քարոզ. - Փառաւորեցուք
Աղօթ. - Գոհանամք զքէն
Երգ. - Սուրբ Աստուած

Փառաւորեալ

Սաղմ. - Օրհնեցէ՛ք, մանկունք
Օրհնութիւն ժողովրդեան:

ԱՐԵՒԱԳԱԼ

Սաղմ. - Եղիցի անուն Տեառն
Կանոն. - Իբրեւ զի
Օրհն. Ի գիշերաց
Քարոզ. - Յարեւելից
Աղօթ. - Յարեւելից
Սաղմ. - Աստուած, Աստուած իմ
Սաղմ. Տէր հովուեցէ
Օրհնութիւն ժողովրդեան:
Այս պաշտամունքը կը զեղչուէր տօնական օրերուն:

ԵՐՐՈՐԴ ԺԱՄ

Սաղմ. - Ողորմեա՛ ինձ
Կանոն. - Տէր ապաւէն
Օրհն. - Ես ասացի
Քարոզ. - Միաբան ամենեքեան (աղուհացի)
Աղօթ. - Որ ի քրոյրէական (աղուհացի)
Սաղմ. - Տէր Աստուած օրհնեալ (աղուհացի)
Քարոզ. - Խնդրեցուք
Աղօթ. - Առաջնորդեա
Սաղմ. - Տէր հովուեցէ
Օրհնութիւն ժողովրդեան:

ՎԵՅԵՐՈՐԴ ԺԱՄ

Սաղմ. - Ողորմեա՛ ինձ
Կանոն. - Խոստովան
Օրհն. - Օրհնեցէ՛ք զԱստուած -
Ի նեղութեան
Քարոզ. - Արթուն մտօք (աղուհացի)
Աղօթ. - Զգեցո՛ մեզ, Տէր (աղուհացի)
Սաղմ. - Տէր, մի՛ յիշեր (աղուհացի)
Քարոզ. - Վասն հիւանդաց
Աղօթ. - Փարատեա
Սաղմ. - Երանի որ խորհի
Օրհնութիւն ժողովրդեան:

ԻՆՆԵՐՈՐԴ ԺԱՄ

Սաղմ. - Ողորմեա ինձ
Կան. - Ի նեղութեան
Օրհն. - Տէր, զուրք
Քարոզ. - Սուրբ սրտիւ (աղուհացի)
Աղօթ. - Տէր Աստուած զօրութեանց (աղուհացի)
Սաղմ. - Տէր, մի՛ մատնեք (աղուհացի)
Քարոզ. - Աղաչեցուք զկենսատու
Աղօթ. - Անկեալ առաջի քո
Սաղմ. - Սիրեցի զի լուրցէ
Օրհնութիւն ժողովրդեան:

ԵՐԵՆՈՅԻՆ

Սաղմ. - Ես առ Աստուած կարգացի
Սաղմ. - Խոնարհեցո՛ Ապրեցո
Երգ. - Օրհնեալ Տէր (կամ)
Լոյս դուարթ (կիրականամտի)
Քարոզ. - Հասեալքս ի ժամ
Աղօթ. - Հասեալքս ի ժամ
Մեծեղի եւ Ուղեցին
Քարոզ. - Աղաչեցուք
Աղօթ. - Լուր ձայնից
Երգ. - Սուրբ Աստուած
Փառաւորեալ
Սաղմ. - Համբարձի
Քարոզ. - Վասն խաղաղութեան
Աղօթ. - Հայր զթած
Տէր ամենակալ (աղուհացի)
Եկեալքս ի խոստ... (աղուհացի)
Աղօթ. - Աստուած բարձրեալ (աղուհացի)
Օրհնութիւն ժողովրդեան:

ԽԱՂԱՂԱԿԱՆ

Սաղմ. - Տէր Աստուած փրկութեան
Սաղմ. - Ի կարգալ իմում
Երգ. - Շնորհեա մեզ, Տէր
Քարոզ. - Գոհացարուք
Աղօթ. - Տէր բարերար
Ընթերցում (աղուհացի)
Ստողագի (աղուհացի)
Սաղմ. - Երանեալ են ամբիժք
Օրհնութիւն ժողովրդեան:
Այս պաշտամունքը կը զեղչուէր տօնական օրերուն:

Գիշերային եւ Առաւօտեան պաշտամունքներուն մէջ կը խառնուէին նաեւ կըցորդներ, որոնց ճշգրիտ տեղերը չենք կրնար ասուել այս շրջանիս: Իսկ եղած յաւելումներով, մեր Աղօթամատոյցը ստացած է որոշ կերպարանք մը, որ հիմը պիտի կազմէ իր ապագայ մեծադոյն զարգացման, եւ որոնց վրայ պիտի բարդուին ուրիշներ, աղօթքներ՝ առանց այլայլելու իր յօրինումքը:

Ահա թէ ինչ գեր ունեցած են մեր Հայրերը ժամադրքի կազմութեան մէջ, տալով անոր ուրոյն գոյութիւն մը՝ անջատելով Սաղմոսարանէն, որուն հետ խառն էր սկիզբները, եւ այս վերջինը դարձնելով աղօթամատոյցին օժանդակ մատեան մը: Այս նոր վիճակին մէջ տեսաւ զայն Խոսրով Անձեւացի ու բացատրութիւններ տուաւ՝ ըսելով թէ կը գտնուէին նոյն Աղօթամատոյցին մէջ «ի պաշտաման եկեղեցւոյ քարոզութիւնք եւ աղօթք քահանայականք» միայն, որոնց մեկնութեամբ դոհացաւ (7, 313): Նոյն պայմանի մէջ է տակաւին մեր երիցագոյն օրինակը 1284ի, քարոզներն ու աղօթքները առաջ բերելով ամբողջապէս եւ փոխերը սոսկ նշանակելով: Իրեն կը նմանին 1375ի եւ ուրիշ քանի մը օրինակներ ալ, որոնց մէջ կ'ապրի այս շրջանի աւանդութիւնը:

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)